ման տեղը նշեն և շմոռանան։ Թվում է, թե այն սովորությունը, որ մինչև ննջեցյալին հողին հանձնելը գյուղում ամեն պարանէլու, հողը փորելու, վարելու և այլն, աշխատանքը դադարեցվում էր, պետք է բացատրել այն երկյուղով—չլինի՞ թե հոգին իր մշտական կայանը որոնելիս սխալվի և շփոթության մեջ ընկնելով մի այլ փորած տեղ ապասսանի։ Գուցե թաղման տեղը գտնելը հոգու համար դյուրացնելու նպատակով էր, որ հայկական գյուղերում գերեզմանի համար ընտրում էին լավ նկատվող վայր, մեծ մասամբ մի բլուր։ Յոթ օր ննջեցյալի տեղաշորը չէին հավաքում և չէին լվանում, լնսն էլ՝ ճրագը անմար էին պահում, քանի որ նա դեռ պտտվում էր տան շուրջը և կարող էր ներս գալ և իր անկողնում ու իր շորերի մոտ պառկելու փոխարեն մի այլ անկողին մտնել։ Այդ յոթնօրյակում գրեթե անընդհատ տանեցիք և բարեկամները հավաքվում էին ու լացուկոծ անում նրա անկողնու և շորերի վրա, որպեսզի նա լսի, թե որչափ նրան սիրում էին և որչափ վշտացած են նրա հեռանալու համար, որովհետև այդ օրերին նա դեռ բոլորովին հեռացած չլինելով, ամենից լավ կարող է լսել նրանց վիշտը։ Այդ օրերը գլուխ չէին լվանում, չէին սափրվում, մազերը չէին խուզում, եղունգները չէին կտրում, անկասկած ոչ թե որպես սգի արտահայտություն, այլ երկյուղ կրելով, որ դեռ իր գերեզմանին լավ չընտելացած հոգին տան շուրջը պտտվելիս, չկոխի լվացվելուց, սափրվելուց, խուզելուց, կտրելուց, գետնին թափված մարմնի մասերը և դրանով նաև կոխի՝ վնասի նրանց տիրոջը[91]։ *Յոթ օր անցնելուց հետո* օխտն՝ *յոթն էին կատարում գերեզմանի վրա, կրկնելով հոգեհանգստի ծիսակատարությունը և* հոգեհացը։ *Ենթադրվում էր, որ դրանով հոգու շարունակ թափառումը տան շուրջը դադարում է և նա ավելի հաստատ կապվում է իր մշտական կայանի՝ գերեզմանի հետ։ Սակայն եթե սգավորներին այցելում էին հեռու տեղից եկած ազգականներ և բարեկամներ, նորից մեջտեղ էին գալիս ննջեցյալի արդեն լվացված հագուստը, հավաքված անկողինը, վերսկսվում էր լացուկոծը, որով կարծես հոգին հեռացվում էր գերեզմանի մոտից և առիթ էր ստեղծվում, որ նա հարազատների տանը մոտենա։ Ապա նորից խմբովին գնում էին գերեզմանատուն և նորից հոգեհանգիստ կատարում թարմ գերեզմանի վրա։ Սրանով հոգին կարծես կրկին վերադարձնում էին գերեզման։*

Այս բոլոր սովորություններից երևում է, որ Զանգեզուրի, ինչպես և այլ գավառների հայը, հոգուն վերագրում էր իրական, ռեալ նյութական գոյություն։ Դա ըստ Վունդտի տերմինաբանության Körperseele՝ *մարմնի հոգին է։ Ննջեցյալի վրա հոգեհանգիստ էր կատարվում բացի* օխտից *նաև* քառասնքին[92] *և տարելիցին։ Ենթադրվում էր, որ այդ առաջին տարվա ընթացքում նա դեռ շատ մոտ է մնում իր հարազատներին և համագյուղացիներին և այդ ենթադրությամբ նա էլ հրավիրվում էր գյուղում կատարվող հարսանիքին։ Փեսացուն ինքը կամ իր ներկայացուցիչը այցելում էր այդ տարի ննջեցյալ ունեցողների տները՝ հետը բերելով օղի և գերեզմանի վրա հոգեհանգիստ էր կատարել տալիս ու հրավիրում տանեցոց հարսանիք։ Այդ տունն այցելում էին հին տարվա վախճանին և նոր տարվա սկզբնավորությանը, Նոսվասարդի կի-*

---

[91] *Մասն ամբողջի փոխարեն*—pars pro toto։

[92] *Արդյոք այս* օխտի՝ *յոթնի և* քառասնքի *հետ չունի՞ մի որոշ մտայնական կապ այն, որ երեխային սովորաբար մկրտում էին յոթներորդ օրը, ծննդկանը պիղծ էր համարվում քառասուն օր շարունակ,* քառասուն *էր պահում։ Այստեղ էլ յոթ և քառասուն թվերը ունեն մոգական նշանակություն, ինչպես և ունեն երեխայի ծննդից հետո։*